Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի ապրիլի 14-ի, ժամը 14:00-ի նիստի
N 9 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի «Մարդկային կապիտալի տեսության հիմունքները»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դ.Ն.Հախվերդյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Թավադյանը, դոցենտներ Ֆ.Ն.Մայիլյանը, Ա.Վ.Գրիգորյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. ներկայացված ուսումնական ձեռնարկը բաղկացած է 3 գլուխներից և 8 ենթահարցերից: Աշխատանքի առաջին՝ «Մարդկային կապիտալի տեսության էվոլյուցիան և հիմնական մեթոդաբանական դրույթները» գլխում հեղինակը ներկայացրել է մարդկային կապիտալի տեսության էվոլյուցիան, հիմնական մեթոդոլոգիական դրույթները, մարդկային կապիտալի տեսության էությունը և դրա տարբեր մեկնաբանումները, մարդկային կապիտալի հիմնական ելակետային դրույթները: Հանգամանորեն ներկայացված են մարդկային կապիտալի չափման մեթոդները և գնահատման ցուցանիշների համակարգը: Աշխատանքի երկրորդ՝ «Մարդկային կապիտալում ներդրումները և դրանց արդյունավետությունը» գլուխը նվիրված է մարդկային կապիտալում ներդրումների էության, դրանց առանձնահատկությունների բացահայտմանն ու արդյունավետության հիմնախնդիրների վերլուծությանը: Համակարգված ձևով ներկայացված են մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգը և այդ ներդրումների տնտեսական արդյունավետության վերլուծության մեթոդները: Երրորդ՝ «Մարդկային կապիտալը որպես տնտեսական աճի գործոն» գլխում ներկայացված է մարդկային կապիտալի, որպես տնտեսական աճի յուրահատուկ գործոնի էությունը, դերն ու նշանակությունը ժամանակակից տնտեսական համակարգերում, ինչպես նաև տնտեսական աճի ապահովման մեջ դրա գնահատման մոտեցումները: Մանրամասնորեն ներկայացվել է նաև տնտեսական աճի ժամանակակից տեսություններում ու մոդելներում

մարդկային կապիտալի արտահայտվածությունը և իրականացվել է տարբեր մոտեցումների համեմատական վերլուծություն:

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանն առաջարկեց ուսումնական ձեռնարկի վերնագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝ **«Մարդկային կապիտալի տեսության հիմունքների»** փոխարեն գրել **«Մարդկային կապիտալի տեսություն»**, որն իր հնչեղությամբ ավելի բնութագրական կլինի ուսումնական ձեռնարկին ներկայացվող պահանջներին: Առաջարկն ընդունվեց: Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 2 (երկու) դրական կարծիք.

1) Մարտիրոս Երվանդի Պետրոսյան՝ Հայ-ռուսական համալսարանի էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2) Վարդան Սամվելի Ալեքսանյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը գիտաուսումնական արժեքավոր աշխատանք է, իր բովանդակությամբ ու կառուցվածքով համապատասխանում է ուսումնական ձեռնարկին ներկայացվող պահանջներին, արտացոլում է համապատասխան մագիստրոսական դասընթացի ծրագրային խնդիրները, կատարված է գիտամեթոդաբանական բարձր մակարդակով և այն կնպաստի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների համալրմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, տնտեսագիտության տեսության ամբիոնի, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի «Մարդկային կապիտալի տեսություն»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Գ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դալբինյան**

2021 թ. ապրիլի 14
Երևան